ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**«ՀՀՌՏ-ԳՀԱՊՁԲ-19/30/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով**

**Ցեմենտի /այսուհետ Ապրանք/ ձեռքբերման գնահատող**

**Հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.09.2019 ժամը 16.00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/

Հ. Սարոյանը

**Անդամներ՝**

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Գ. Սահակյանը

Ռ. Ս. Սահակյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոյանը

Բացակայում է Ս. Փայասյանը

1. **Հանձնաժողովը արձանագրեց**

**1.1 Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՏ/ կարիքների համար Ապրանքի ձեռքբերման նպատակով 19.09.2019 էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՏ-ԳՀԱՊՁԲ-19/30/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով՝ ս.թ. սեպտեմբերի 26-ին, ժամը 16.00-ին:

**1.2 Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | Էլ. փոստի հասցեն | ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | Էկոմիքս ՍՊԸ | tenders@360shinbaza.am | 01255701 |
| 2 | Տիգրան Միրաղեղյան ԱՁ | nelly.davtyan@gmail.com | 30972241 |

**1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

Տիգրան Միրաղեղյան ԱՁ և Էկոմիքս ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին /կցվում են/:

1.4 Մասնակիցների առաջարկած գինը, նախահաշվային գինը.

ՀՀ դրամ

| N | Մասնակցի անվանումը | *1 չափաբաժին /Ցեմենտ/* Նախահաշվային գին՝ 180 000 | | |
|---|---|---|---|---|
| | | արժեք | ԱԱՀ | գումար |
| 1 | Էկոմիք'ս ՍՊԸ | 145 000 | 29 000 | 174 000 |
| 2 | Տիգրան Միրաղեյան ԱՁ | 180 000 | - | 180 000 |

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետով Էկոմիքս ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար և 1 չափաբաժնով Էկոմիքս ՍՊ ընկերությանը ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից /Կոմիտե/ կատարել հարցում՝ մասնակցի Էկոմիքս ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում /02.10.2019 ներառյալ/ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը. ապրանքի տեխնիկական բնութագիրը, առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (ամբողջական նկարագիր)

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

2.4 Գնահատման նիստը տեղի կունենա Կոմիտեից տեղեկատվություն ստանալուց և որակավորման փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Հ. Սարոյան

անդամներ՝ ____________ Ռ. Տ. Սահակյան

____________ Գ. Սահակյան

____________ Ռ. Ս. Սահակյան

քարտուղար՝ ____________ Մ. Նիկոյան